# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## 1920 - ՄԱՐՏ - 1920


| | էջ |
|---|---|
| ՄԵՂՐԻ ՇԻՐԱԿԱՑ. — *Քաղաքականութիւն զուգակից բարբարոսութեան* | 65 |
| ԱՍՏՂԵԱՆ Հ. ԳՐԻ. — *Զար Նախանձ* | 69 |
| ՄԻՆԱՍԵԱՆ ՍԵՊՈՒՀ. — *Հելլէնէ Ողբերգութիւն* | 70 |
| ՏԷՕՂԼԷՆ Հ. Ա. — *Հայ Հանդէսներ* | 74 |
| ԽԱՆՊԷԿ Մ. — *Ցայգանուագ (բանաստ.)* | 75 |
| ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — *Բամ. փորոտան* | 76 |
| ԳԻՏԱԿԱՆ. — *Ուշաթափիչ բոյսեր* | 78 |
| ՄԵՆԱՍԷՐ. — *Ո՞վ եռագոյն եռախորհուրդ (բանաստ.)* | 80 |
| ՅՈՎՍԷՓԵԱՆ Հ. Ա. — *Հայրենիքի լեզուն* | 81 |
| ՄԵՂՐԻ ՇԻՐԱԿԱՑ. — *Քաջասիրտ Թագաւորը* | 85 |
| ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. — *Արժանաբնակ Սարդը (բանաստ.)* | 91 |
| ՍԻՆԱՆ Հ. ԽՈՐԷՆ. — *Ճանապարհորդութիւն ներքին մոլորակներու* | 92 |
| ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. — *Մենաւոր ծառը (բանաստ.)* | 96 |


# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՆԱՆԱՅԻ *Ճառընտիր վր. Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին.* Վենետիկ Ս. Ղազար, 1920. Ներածութիւն էջ ԼԹ + 445։ Հատորս մաս կը կազմէ *Թանգարան Հայկական Հին Նոր Դպրութեանց* շարքին։ Հրատարակիչը՝ Հ. Քերոբէ Վ. Չրաքեան, Ներածութեան մէջ կը ծանուցէ ինչ որ Նանա Ասորւոյ վրայ տեղեկութիւն կայ մեր պատմիչներու քով. եւ անկէ կ'իմանանք թէ մեկնութիւնս գրուած է 840ի ժամանակները Բագարատ Բագրատունիի խնդրանքով, եւ քիչ վերջ թարգմանուած է հայերէն՝ Ամբատ սպարապետի եւ Մարիամ Սիւնեաց տիկնոջ փափաքին վրայ։ Նանա ընդհանրապէս հետեւած է Ոսկեբերանի։ — Գինն է՝ ֆր. 10։

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»ի ՕՐԱՑՈՅՑԸ, 1920։ *Հաճոյքով կը դիտենք պատի օրացոյցի այս խաւաքարտէսը, ամերիկեան ընդհանուր ցուրտ խմբագրութեանց մէջ՝ ուշագրաւ հրատարակութիւն մը։ Պատկերը կը ներկայացնէ «Միացեալ, Անկախ Հայաստան»ի Անցեալը, Ներկան ու Ապագան։*

Կ. Սիտալ, «ԳՈՒՍԱՆՆԵՐԳԻՐ», *Յովհ. Աւագեանի Յառաջաբանով։ Ոսկեխոտը, Արեւամարտը, Վրէն ու Ջին, Հրեղէն Ջին, Մ'հեր։ Հայ Աւանդավէպեր երկխօսածօրէն հաւաքուած և Գուսանօրէն Պատմերգուած – Ա – «Կոչնակ»ի Հրատարակչական Ընկերութիւն, Նիւ Եորք,* 1919, *ճաշակաւոր տպագրութեամբ* 123 *էջ, գինը* 1,00 *Տօլար։ Դիմել* 115 East 24th Street, New York, N. Y.

«ԻՐԱՒԱԳԷՏ»։ *Օրկան Հայ իրաւագիտաց Միութեան։ Ա. տարի, Թիւ* 1,15 *Դեկտ.* 1919։ *Բաժանորդագրութեան պայմաններ՝ տ.* 150 *Ղրուշ, կամ վ.* 80 *Ղրուշ։ Տպագր. Մ. Յովակիմեան, Պոլիս։ Արտօնատէր՝ Լութֆիկ Գույումճեան, Պատ. Տնօրէն՝ Յարութիւն Պիւքիւճեան։ «Իրաւագէտ»ը պիտի կարենայ շատ կարեւոր դեր մը կատարել։ Յաջողութիւն կը մաղթենք։*

«ԻՐԱՒՈՒՆՔ» *Պարբերաթերթ Հայ Երիտասարդ Իրաւագէտներու Ակումբի։ Ա. տարի,* 1919, *թիւ* 1, 2, 3, (*թիւ* 1 *և* 2, *կը խնդրենք Պատ. խմբ. էն*)։ – *Բաժ. պայմանները՝ Պոլիս և գաւառները՝ տարեկան* 120 *Դահեկան, – Արտասահման և Հայաստան՝* 20 *Ֆրանք։ – Հասցէ՝ Անդրանիկ Թագւորեան, Սթամպուլ, Չիքէք Բազար, Աթըփարմաք խան, թիւ* 10-11։

digitised by A.R.A.R.@

«ԵՐԵՒԱՆ»Ի ՏԱՐԵՑՈՅՑԸ, Ա. տարի, 1920, Նախանկ թուրին Քրիստոսի և Բնուն Թուականին Հայոց ՏՆԺԲ – 4412 = ՏՆԺԲ – 4413 և Ցուպաւոր թուականին ՌՅԿԹ – 1369 = ՌՅՆ – 1370։ Հրատարակութիւն «Երեւան» հայաթերթի, Կ. Պոլիս, տպգր. «Արարատ»։ էջ 88, պատկերազարդ, արձակ և տաղաչափուած տողերու «Գրական Բաժին» ով. ունի նաև Ազգերու սեփական յատկացուած էջեր։ – Գնողները, օգուտ քաղելով անկից, անշուշտ պիտի չզղջան՝ թէ փութան դիմել «Երեւան»ի խմբագրութեան, Բերա, փոստարկղ 210, Կ. Պոլիս։

ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑ, 1920, Ա. տարի։ Կազմեց Սիմոն Գաբամաճեան։ Տպ. Յ. Մ. Ազնաւոր, – 188, պատկերազարդ և դիւրատար՝ «փոքրիկ ծաւալի մը մէջ խտացնել շահեկան տեղեկութիւններ, ևն. ևն. հաճոյալի նիւթերով զարդարել Տարեցոյցի մը էջերը, փոխանակ Գրական ձոխ Հաւաքածոյի մը հատուածները զետեղելու հոն։» – փութացէք օրինակ մը ստանալ, դիմելով՝ Չարշըքափը, թիւ 50, Կ. Պոլիս։

ԴԷՊԻ ԵՐԿԻՐ, ԴԷՊԻ ԳՈՐԾ, 1920, «Հայրենիք» օրագրի Պատի Օրացոյցը՝ թէև գեղարուեստական ճաշակէ մասամբ զուրկ՝ ունի իմաստալից պատկեր մը, կարող է ամերիկահայոց հաճելի զարդ մ՛ըլլալ։ – Դիմել «Հայրենիք»ի խմբագրութեան, 13–15 Shawsnut Street, Boston, Mass.

LE CHARIVARI (Illustré, Satirique, Politique, Financier) N. 434, 441.

Նահանջ թիւ 1920, փրկչին թուական... Հայաստանի Հանրապետութեան 2 – 3 տարին։ Տպարան Հայաստան. Եկեղեցւոյ, Տիգրոյդ, Միշիկն Աշխատութիւն և Տպագրութիւն Թեմակալ Հովուին։

ՀԱՅ ԲԺԻՇԿ, Բժշկական, Առողջապահական, Գիտական, Պատկերազարդ Ամսաթերթ, Ա. տարի, 1919, թիւ 1-10։

ՀԱՅ ԲՈՒԺԱԿ Բժշկական և Առողջապահական Ամսաթերթ, Ա. տարի, 1920, թ. 1, – Տնօրէն՝ Բժ. Վ. Ալթունեան, խմբագիր՝ Բժ. Մ. Գարակէօզեան։ Մնայուն Աշխատակիցներ՝ Գաբիկեան Հ. – Գազանճեան Ռ. – Հայկունի Ա. – Մասիս Եդ. – Շահնազարեան Գ. – Պէնոն. – Սանտալճեան Ն. – Տէր Ստեփանեան Յովս. – Քէչիշեան Գ։

Ամէն անոնք որ չեն սիրեր առողջ ըլլալ և կրնան բժիշկի պէտք չունենալ... թող զգուշանան բաժանորդագրուելէ վերոյեղեալ երկու ամսօրեաններուն, երկուքն ալ խմբագրուած նոյն Տեսչութենէն։

Մերուժան Պարսամեան «ՄԱՐՄՆԵՐԳՈՒԹԻՒՆ», 12 հնչեակներ անտիպ։ Փարիզ, 1919։ Գինը՝ 2 ֆրանք։

Լաօ – Ձը, «ԸՆԹԱՑՔԸ և իր ԿԱՆՈՆԸ» – Հայացուց՝ Կ. Մ. Զավտարեան։ Վիեննա, Մխիթարեան տպարան, 1919, էջ 90, «Վերջախօսք»ի էջ 91-99 նախաբանական յաւելուածով, – վայելչագեղ թուղթի վրայ՝ ցրտասարսուռ տպագրութիւն։ Այս գիրքը խանդավառ ընդունելութիւն պիտի գտնէր մեր ազգէն, եթէ... ասկից 1 – 2 հազար տարի առաջ հրապարակ իջնէր «Նորահաս Հայ Մտաւորականութեան Ջօն Հայացնողէն»։ Իմաստասէր անձինք պէտք չէ դանդաղին ճոխացնել իրենց գրատունը՝ սոյն գրքով։

ԱՐՇԱՒԻՐ ՀՕՇԱՊԷՐԵԱՆ (Բարունի) 1898 – 1918։ Քերթուածներ և արձակ բանաստեղծութիւններ 1914–1915, Կ. Պոլիս, տպագրութիւն՝ Օ. Արզումեան, (էջ 136)։ – Շատ արժանավայել և ազնիւ մտածութեամբ՝ Տէր և Տիկին Պ. Հօշապէրեան՝ «Ներկայ հատորին տպագրական ամբողջ ծախքը հոգալով՝ նուիրած են Որբերու և Տարագրելոց Ազգ. Խնամատարութեան»։ Հրաշափառ արշալոյսի մը բազմերանգ հրապոյրը ստուերագծող փոքրիկ գրագէտը – Արշաւիր Հօշապէրեանը – թող անմահ մնայ։

ՈՐԲՈՒՆԻ Տեղեկատու Հայ Որբախնամ Ընկերութեան (Հիմնուած 1905ին), Ա. տարի, 1 Դեկտ. թիւ 8, 1919, տպագր. Ա. Գասապեան, Աղեքսանդրիա (էջ 148)։ Հասցէն՝ փոստարկղ, 929 (իսկ ի Գահիրէ՝ 1498)։

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ, Որբանոց – Վարժարան Բօր-Սայիտի Գաղթավայրին տպագրած է իր 213 ՄԱՆՉ ՈՐԲԵՐու ցուցակը, կոկիկ նշանակելով Մականուն և անուն, ծննդավայր, տարիք։ Երկրորդ ցուցակ մը՝ ԱՂՋԻԿ որբերու, թուով 136։ Երրորդ ցուցակ մը՝ Ցէօրթ – Էօյի «Քէլէկեան» Որբանոց – Վարժարանի Որբերու, թուով 200 մանչ։ Աւելորդ կը համարինք ջատագովել ականյայտնի գործունէութիւնը սոյն պատուարժան Ընկերութեան։ Հասցէն՝ Union Gén. Arménienne, Comité des Ecoles et des Orphelins. Le Caire, B. P. 1079։

Տոքթ. Մ. Սալբի ԱՂԵԱԿՆԵՐ ԵՒ ԽՂԵԱԿՆԵՐ Հայ վրանաքաղաքին Ցարեգիրքը, Աղեքսանդրիա, տպ. Ս. Գասապեան, 1919 – 20 (էջ 270, գին՝ 25 Դահ. ողջ)։

Դիտեցէ՛ք սա հակառը գեղանկար, սա ծովը ալեծածան, յաղթանակի սա լեռները փառապանծ՝ ուսկից «Սուէտահայերը իրենց ամբողջութեանը մէջ, ընդամէնը

digitised by A.R.A.R.@

6311 հոգի, որոնցմէ 4231ը (10էն վեր՝ 1711 իգական, 1937 արական, ու 10էն վար՝ 666 մանչ և 617 աղջիկ) ճիւաղ տեղահանութեան մահաբոյր առաջարկներուն դէմ անհուն զայրոյթով մը բողոքելով՝ լեռ բարձրացած և անհաւասար կռիւի արիւնաներկ ճամբաներէն, մուխի և բոցի մէջէն յաղթապանծ՝ Բորդ–Սայիտ առաջնորդուած են»։ Բազմապիսի ու բազմապատիկ լուսապատկերնե. րով զարդարուած և բազմադրուագ մանրամասնութիւն. ներով կենդանագրուած այս հատորը պատիւ կը բերէ Մեծապատիւ Հրատարակչին։ Գեղեցիկ խմբագրութիւն մ'է այս, ուր, բացի բժ. Մ. Սալբիէն, շատ մը համակրելի ստորագրութիւններու ալ պիտի հանդիպին ընթերցողք։

«Հայագիտուտ» Մատենաշար, թիւ (1ը՝ պակաս), 2, 3, 4, 5, 6, 7. Պ. Տ. Զիթունիի այս փոքրիկ հաւաքածոները լի են մեծամեծ իմաստներով, և — հետաքրքիր — արժանի ուշադրութիւնը գրաւելու՝ որ և է հայ ընթերցողի։ Ահաւասիկ շարքը անոնց.

1. – ՄԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ (ստացած չըլլալով կը խնդրենք)։ 2. – «Յուշիկք Հայաստանի (Vade = *mecum d'Arménie*) 1919, Ա. տարի։ Հայաստանի գունաւոր մեծ քարտէս, 2 պարզ քարտէս, 41 պատկեր, էջ 87, (թարգմանուած եւրոպական երկու լեզուներու), տպ. Օ. Արզումանի, Կ. Պոլիս, Պահճէ–Գափու, Շիրին խան, թիւ 5 (Գինը 50 դհկն. ամէն տեղի համար)։ – 3. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽԱՂԱՇԽԱՐՀ (Jeu-monde Oriental) Տոհմիկ խաղեր և ժամանցներ, «Իզմիրեանց» մրցանակով պսակուած օրինակէն՝ 101 խաղի յաւելումով ճոխացած... 1919 (էջ 192)։ – 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԵՐ. Հայաստանի Բուսական, կենդանական, հանքային, ու ճարտարագործական հարստութիւնները։ Գործի Նոր Ասպարէզներ. (էջ 63)։ – 5. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ «ՎԻՃԱԿ» Հայկական Սովորոյթներ (էջ 39) – 6. ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (աշխարհաբար, էջ 63). – 7. ԱՍՈՒԻԽՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ա. Պատկերներ Հայ Բնաշխարհէն, բ. Հայրենիքի համն ու հոտը, գ. խօսող դարեր ու թիւեր, դ. խոհեր-Յուշեր՝ Վարուժան Արշալոյսի... 1920 (էջ 143)։

Տ. Զիթունին ազգային գրականութեան մէջ մասնաւորելի անհատ մը պիտի մնայ, երբ ժրաջան հաւաքիչ։ Նա դեռ անտիպ ունի քանի մը տասնեակ պրակներ, որոնք մեկենասի կը կարօտին որպէս զի լոյս տեսնեն. պէտք է հայրենասիրական այս գործիկին աջակից հանդիսանան հայ հարուստներ։

Նիւ Եօրքի ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ օրագրական թռուցիկները, 1917–19։ Շնորհաւորելի է կանոնաւոր գործունէութիւնը Վեր. Անդրանիկ Ա. Պետիկեանի՝ որ է հանրածանօթ հովիւը նոյն Եկեղեցիին։ Շնորհակալութեամբ ստացած ենք նաև միւս ծրարը՝

ԵԿԵՂԵՑԻ կրօնական ամսաթերթ, հրատարակութիւն Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան, 1917 և 18։

ՀԱՅ ՁԱՅՆ ազգային, քաղաքական, տնտեսական հայաթերթ (1920 Բ. տարի)։ Բաժանորդագրութիւն՝ 300 թիւ Կիլիկիա 700 զրշ. Թուրքիա 800, Արտասահման 60 ֆր. – հասցէն՝ փոստարկղ 62, Ադանա, Կիլիկիա։ – Ո՛վ ազգասէրներ, փութացէք ունկնդրելու Հայ Ձայնին որ կ'արձագանգէ մեղմօրէն՝ հրատարակուելով փոքրածաւալ չորս էջերով։

ԿԻԼԻԿԻԱ, ուրիշ արձագանգ մը նոյն սիրելի աշխարհէն։ Թէ՛ այս թէ՛ նախընթացը, երկուքն ալ ընթերցող-յաճախորդներու յօգնակի առատութեան կը կարօտին՝ բարւոքելու համար իրենց տպագրութիւնը... Կիլիկիան «օրաթերթ» է և լոյս կը տեսնէ մերթ ալ գոյնզգոյն թուղթերու վրայ (ճերմակ, շագանակագոյն, կարմիր...) որոնք կրնան յիշեցնել հայոց՝ սպիտակափառ սարերը հայրենեաց, կամ՝ ցորենաշատ դաշտերը, կամ՝ որդանկարմիր ծաղիկները... անմահաշունչ բուրմունքը Հայաստանի։

ՑԱԽ ԱՒԵԼ երկշաբաթեայ անպաշտօն օրկան Ամերիկահայ երգիծասէր երիտասարդութեան, 1920 Դ. տարի։

« Appel à toutes les nations civilisées » du Comité Central de la Ligue pour la Défense des Droits Ottomans.

Mikael Varandian, Membre du Parlement Arménien, LE CONFLIT ARMÉNO-GÉORGIEN ET LA GERRE DU CAUCASE, Préface d'Alber Thomas, – Paris, Imp. M. Flinikowski, 216 Bd. Raspail, 1919, prix 2 fr. 50 (վայելչատիպ 152 էջ)։ Տեար Վարանդեան կը շարունակէ աշխատիլ... կը գործէ անխոնջ, ազգասիրական եռանդով։

*Congresso mondiale delle Chiese Cristiane* per le questioni di fede e ordine. Rapporto della Delegazione mandata in Europa e nell'Oriente, Pubblicato dalla Commissione della Chiesa Episcopale Americana, 1919.

---

**Մեր Լիակատար Ցուցակը ձրի կ'ուղարկենք փափաքողաց։**

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ПУБЛИЧНАЯ БИБ...
digitised by A.R.A.R.@